ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. օգոստոսի 2 թիվ 76 -Ա

ՆՈՐ ԱՐԹԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային Անվտանգության Ծառայության տնօրենի տեղակալի 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 2/3/1-771 գրությունը՝ *կարգադրում եմ.*

1. Նոր Արթիկ գյուղական համայնքի ջրամատակարարման համակարգի հիմնանորոգման աշխատանքների ընթացքն ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Ուսումնասիրությունը կատարել օգոստոսի 5-ից 10-ը և արդյունքների մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2011թ. օգոստոսի 2-ի թիվ 76 -Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՆՈՐ ԱՐԹԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ս.Հովսեփյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Կ.Թումանյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Գ.Գյուրջյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆ